

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Գ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Բ Ա Ռ Ա Ր Ա Ն
ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԵՐԿԵՐԻ
(ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԵՎ ՕՏԱՐ ԲԱՌԵՐ)

Առանձնատիպ «Խ. Արովյանի երկեր»-ի IV հատորից

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1947

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Գ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Բ Ա Ռ Ա Ղ Ա Ն ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԵՐԿԵՐԻ

(ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԵՎ ՕՏԱՐ ԲԱՌԵՐ)

Առանձնատիպ «Խ. Արուլյանի երկեր»-ի IV հատորից

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1947

Ե Ր Կ Ո Ի Խ Ո Ս Ք

Այս բառարանն ընդգրկում է Աբովյանի երկերում գործածված բարբառային ու օտար բառերը:

Բացատրվող բառերի դիմաց, եթե նրանք բացահայտ օտար են, նշված է, թե տվյալ բառը որ լեզվի սեփականությունն է: Այն բառերը, որոնք արարատյան բարբառում անգործածական են, հարազատ չեն տվյալ ժամանակի Քանաքեռի խոսվածքին, սկզբից կրում են (*) նշանը, իսկ արարատյան բարբառի կայուն կապակցությունները (-) նշանը:

Տրված են բառերի, ինչպես և կապակցությունների միայն այն առումները, որոնց հանդիպում ենք Աբովյանի երկերում: Այսպես, օրինակ՝ քաշվել բառը արարատյան բարբառում ունի տասից ավելի առումներ՝ նիհարել-, հեռանալ, նկարել, կշռվել և այլն, իսկ Աբովյանի մոտ գործ է ածվել միայն պատկառել իմաստով: Բառարանում տրված է միայն վերջին իմաստը: Շատ հին փոխառությունները (պահլավերենից և այլն), ինչպես օտար արմատից, հայերենում կազմված ածանցումներն ու բարդությունները, չեն կրում որևէ նշում, ինչպես՝ անթամահ, անիսամ, բրշկել, թամաշ անել, թամաշավոր և այլն:

Պահպանված է հեղինակի բաղաձայնների ուղղագրությունը:

Գոյական անունները տրված են եզակի թվի ուղղական հոլովով: Իսկ այն գոյականները, որոնք բարբառում գործ են ածվում միայն հոգնակի թվով կամ որևէ հոլովով (նոթեր, ճավլեր, ապով, ուսուլով), տրվում են այդ ձևերով: Բայերը տրված են անորոշ դերբայների ձևերով (քաշել, դգել):

Տաճկերեն այն բառերը, որոնց բացատրությունը հեղինակը տալիս է նույն տեքստում, տեղ չեն գտել բառարանի մեջ:

Աբովյանի երկերի բառարանի մեծ մասը, ավելի քան 2500 բառ, մեծ մասամբ աստղանիշ չունեցող, օգտագործված է «Վերք Հայաստանի»- ի մեջ:

Բառարանը կազմել է ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Գ.

Գասպարյանը:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

<i>Ա.</i>	<i>Արաբերեն</i>	<i>Հն.</i>	<i>Հունարեն</i>
<i>Աղբ.</i>	<i>Աղբբեջաներեն</i>	<i>Ղրբ. բրբ.</i>	<i>Ղարաբաղի բարբառ</i>
<i>Ասր.</i>	<i>Ասորերեն</i>	<i>Մնկ.</i>	<i>Մանկական բառ</i>
<i>Արհմ.</i>	<i>Արհամարական բառ</i>	<i>Մշ. բրբ.</i>	<i>Մուշի բարբառ</i>
<i>Անրգ.</i>	<i>Անարգական բառ</i>	<i>Պ.</i>	<i>Պարսկերեն</i>
<i>Գ.</i>	<i>Գերմաներեն</i>	<i>Ռ.</i>	<i>Ռուսերեն</i>
<i>Եբր.</i>	<i>Եբրայեցերեն</i>	<i>Վ.</i>	<i>Վրացերեն</i>
<i>Թղթր.</i>	<i>Թաթարերեն</i>	<i>Տ.</i>	<i>Տաճկերեն</i>
<i>Լ.</i>	<i>Լատիներեն</i>	<i>Փխբ.</i>	<i>Փոխաբերական</i>
<i>Հեզն.</i>	<i>Հեզնական բառ</i>		

Ա

Աբա ա բրդե գործվածքից կամ թաղիքից պատրաստած վերարկու:

Աբասի 1. չորս շահու արժողությամբ պարսկական արծաթե դրամ, 2. քսան կոպեկանոց, 3. քսան կոպեկ:

-Աբեյյան պատարագ արդար՝ արդարացի աղոթք:

Աբուտ պ. պատկառանք, ամոթի զգացում:

Աբուտով օրինավոր կերպով, ամոթի զգացում ունենալով: **Գինարմադը միշտ պետք է արուռով հագնի, արուռով մաշի:**

Ադա :ե՛յ, ա՛յ տղա

Ադաք. տ. կղզի:

Ադաթ ա. ավանդական օրենք, սովորություն:

Ադաթին սովորության համեմատ: **Ադաթին, լազաթին հինա դնել:**

Ադամորդի մարդ: Էլ ինս, ջինս, իսան, ադամորդի չէր երևում:

Ազան ա. մզկիթի աշտարակից մյուեզզինի կարդացած աղոթքի հրավերը:

Ազար պ. 1. վիշտ: **Բալքի թե մեկ ազար, մեկ մուրագ ունի սրտումը:**

2. ցավ, հիվանդություն: **Մարդ, անասուն սովի, ցրտի ձեռիցը ազարավ ընկավ:**

Ազափ ա. ամուրի, չամուսնացած

Ազիզ ա. 1. սիրելի, թանկագին, 2. սուրբ, հանդիսավոր, տոնական: **Ազիզ օր:**

*** Աթա ա.** հայր:

Աթադան բարադան տ. պապենական, նախնիներից մնացած, ըստ հնի:

Աթաշ պ. 1. կրակ, 2. բարկ, թեժ: **Միրտս մեկ թունդի արաշ կրակով լիքը:**

Աթար անասունի կվի զանգվածից կտորներ, որ չորացնելով գործ են ածում որպես վառելիք. ձեռնաթուխ քակոր:

Աթեշակ պ. փայլակն: **Ձեռներն ինչպես արթեշակ կրակ, նրանց դնգներ յաղված սուր սլաք, շունչներն ինչպես բոցեղեն ծովը իրար գլխի կթափեն:**

Աթրաֆ ա. կողմ, շրջապատ:

Աթիլ ա. վայել, համեմատ: **Մեկն էլա իր աթիլ բան չուներ:**

Ածդահա 1. վիշապ, առասպելական ամեհի օձ. 2. **փխբ.** հսկա, վիթխարի

Աժել պ. արժենալ: **Ամեն մեկ խոսքը մեկ ջավահիր աժի:**

Ալ տ. վարդագույն, կարմիր

*** Ալահ սախլասն տ. 1.** աստված օգնական, աստված պահի: **Զիուդ դամշիր, դոջա բաբա՝ ալահ սախլասն:** 2. ողջույն

Ալամ ա. 1. Աշխարհ: **Մերս հեռու, տանից դուրս արած, օլֆից ալամից դեն քցած:** 2. արարածներ, ժողովուրդ, հասարակություն:

Գլուխը աշխարքին ալամին ցույց տա:

-Ալամ աշխարք ամբողջ աշխարհը, արար-

աշխարհը: Ալամ աշխարքի գոված:

Ալանի 1 1. առանց աղի: **Ալանի շորվա:** 2.

փխբ. տհաս, պակասամիտ: **Ալանի խելք:**

Ալանի 2. կորգահան արած և մեջը ծեծած ընկույզ ու շաքար լցրած դեղձ, որ չորացնում ու գործածում են որպես չոր միրգ:

Ալաչուխ տ. վրան: **Օղլուշաղը ալաչուխի տակն արեց:**

Ալապստրակ նապաստակ:

Ալավ պ. բոց:

-Ալարը գալ ծուլանալ:

Ալբյալը իսկույն, անմիջապես:

*** Ալիշ վերիշ տ.** առևտուր:

Ալլահ ա. աստված:

Ալլահվերդի/Ալլահ վերդի ա. աստված տվեց, աստված տա, շնորհ արա :

Ալհադա առանձնապես, հատկապես:

Ալմագ պ. ադամանդ:

Ալվան ա. 1. երփներանգ , գույնզգույն: **Ալվան-ալվան ծաղիկեր:** 2. պայծառ, վառվռուն: 3.

փխբ. գեղեցիկ: **Երևանու ալվան աղջկերանց վայելչությունը:** 4. խաղողի մի տեսակ:

Ախմախություն հիմարություն, տխմարություն:

Ախտո պ. 1. գոմ, 2. մտուրք:

Ախչիկ պարոն տիրուհի:

Ախպեր եղբայր :

Ախտա ներքինացրած (մարդ), կրտած (ձի):

Ախր տ. 1. վերջապես, չէ որ, 2. վախճան:

Ախունդ պ. մահմեդական, հոգևորական:

-Ախ ու ռխ հառաչանք:

-Ախ քաշել հոգոց հանել:

Աժել 1. լցնել, 2. նվազել **Մագ աժել 3.** ձու աժել

Ակ 1. աչք, 2. ակունք, 3. անիվ

Ականաթ թակարդ, որոգայթ, ծուղակ Պարսիկը կամեցել ա նրան ականաթի մեջ քցի:

Ական թոթափել մի ակնթարթ, անմիջապես:

Ական թոթափել թն առած եղ դառան:

-Ակը տալ նայել, այցելել:

Ահ երկյուղ, վտանգ: **Ճշմարիտ ա, մենք կորած ենք , թե որ մեր գլուխը ահին տանք մեր խելքը կորցնենք:**

Անվայ ա. 1. դրություն, վիճակ, 2. գործի ընթացք: **Տանուտերը Ղարաքիլիսա մարդ** դրկեց կնյազի մոտ ու բանի անվալն իմացում տվեց:

Աղա աղբ. իշխան, տեր:

Աղայ աղբ. փարախ:

Աղալար աղբ. իշխանավոր, առաջնորդ:

Աղաք առջև

Աղբաթ ա. վերջ, վախճան

-**Աղբաթ խեր ըլի** վերջը բարի լինի:

Աղե արդասունք/աղի արտասունք թափել վշտալի արցունք, աղի արտասունք, դառն կսկծալի:

***Աղեկ** լավ

Աղգոթի տ. բառացի՝ բերնահուր, չախմախի հրացանի փամփշտակալի փոսիկի մեջ լցվող փոքր քանակությունը, որին զարկանը կպչելով կրակ է առաջացնում ու պայթեցնում:

Աղլամագ ա. անհասկացող:

Աղլուխ տ. թաշկինակ:

Աղոթարակ 1. արևելք: **Արեգակը էս առավոտ՝ որ քնի տեղիցը ու աղոթարանիցը չի բարձրացրեց:** 2. արշալույս, արևածագ: **Հրես աղոթարանը որտեղ որ ա կբացվի:** 3. աղոթատուն: **Մեջդի աղոթարանի առաջին՝ մեծ բազմություն կա թոփ էլած:**

-**Աղչիկ քաշել** աղչիկ փախցնել

Աղսախկալ տ. ծերունի, ալեհեր

-**Աղցան անել** խիստ ծեծել ջարդուփշուր անել:

Աղուհաց/Աղ ու հաց 1. կերակուր, սնունդ, 2.

երախտիք: **Հալալ արեք նրան ձեր աղուհացը**

Աղուն աղալու համար պատրաստված հացահատիկ:

Աղունիկ աղավնի: **Աղունքանց կուտ ճարի:**

Աղբատուղբուտ մուրացկաններ, աղբատներ:

Աճուճ պաճուճ առասպելական թզաչափ էակներ, որոնք պիտի երևան գան աշխարհի վախճանին, թզուկ: **Գաբբիելյան փողը փչեր, աճուճ-պաճուճը, Եղիա մարգարեն գային, մարդիկ մեկ թզի չափ դառնային:**

Ամա ա. բայց:

-**Ամալ անել** աճել, գորանալ:

Ամակ տ. երախտիք:

Աման վաճ, ցավ, վիշտ արտահայտող բացականչություն:

Ամանաթ ա. ավանդ, պատանդ

-**Ամանը բերել** զգվացնել: **Խեղճի ամանը բերել էր:**

-**Աման չաման** ամանեղեն, ամանասարք:

Ամարաթ ա. ապարանք, դղյակ:

Ամբար պ. շտեմարան, մթերանոց :

Ամեն բոլորը, համոքեն: **Ամենն էլ ուզում էին, որ իրենց ոտը գնամ:**

-**Ամեն մարդ իր ձին քշել** ամեն ոք իր խոսքն առաջ տանել:

Ամի տ. հորեղբայր:

Ամոթու ամոթից, ամոթի պատճառով:

Ամպակալել ամպերով ծածկվել: **Ամպակալած երկինք:**

*** Ամր ա.** հրաման, իշխանություն

Այան ա. հայտնի: **Աստծուն իրան այան ա անձրևի տակին չոքեչոք եմ անում:**

-**Այան ըլել** հայտնի դառնալ, գաղտնիքը բացվել:

-**Այբի կտոր չըլել փորումը** անգրագետ լինել, տգետ լինել:

Այիբ ա. արատ, պակասություն, ամոթ

Այինոյին ա. դատարկ, մանր-մունր, արժեքագուրկ:

-**Այնումը քրցել** ուշադրություն չդարձնել, բանի տեղ չդնլ:

Այվան ա. դահլիճ: **Այվան օթախ:**

***Անա տ.** մայր, մայրիկ:

-**Անաղուն ջաղաց** աղուն չունեցող ջաղաց: **Անաղուն ջաղացի քարն էլ չի պտիտ գա:**

Անեղ աղեղ:

Անեմոն հն. պուտ, ծափկոտրուկ:

Անթամահ ոչ ազահ, աչքը կուշտ:

Անիզ անհետք, անարահետ:

Անիսաֆ անխիղճ, անգութ:

Անծամ առանց ծամելու:

Անծուծ անխելք:

Անկաջարոնուկ ավետյա, աչքալուսեք:

-**Անկաջարոնուկ տալ** ուրախ լուր բերողին նվեր տալ:

-**Անկաջը հալել/ Անկաջին հալել** խոսքը լավ հասկացնել, հիշողության մեջ լավ տպավորել:

-**Անկաջը ձենի** լուրի կամ մեկի գալստյանը սպասող:

-**Անկաջը վեր անել** նշանակություն՝ կարևորություն չտալ, ուշադրության չառնել:

-**Անկաջի տակը քորել** հեզնել:

-**Անկաջումը ձեն տալ** ականջը խոսել, ականջը կանչել:

Անհավար անօգնական:

Անձող ածուխ:

Անձողարար ածխագործ:

Անդարար անհանգիստ:

Անյախա անօձիք:

Անյարաղ անզեն:

-**Անյարաղ ասպար** անզեն անզրահ:

Աննալ անպայտ, պայտ չունեցող:

Անշատ անվտանգ, ոչ վնասակար:
Անտթի քաղցած, սոված: **Անտթի փորով** զկոտաց:
Անուշ տես՝ Անուշ:
Անուշ պ. 1. քաղցր, նեկտար. 2. այսպես ասում են խմիչք խմելուց հետո:
Անջախ տ. հազիվ, վերջապես:
-Անջախ մի անջախ հազիվ-հազ:
Անջան վատույժ, տկար, թույլ:
Անջիգար անգույթ, անսիրտ, անխիղճ:
Անսաս անձայն, անմուննչ, անշշուկ:
Անցվորական անցորդ, ուղևոր:
Անում անուն:
-Անումը կոտրել անվանաբեկ անել, անվանարկել:
-Աշ դնել գարու ալյուրից ու թանից պատրաստված շաղախում կաշին թրջոց դնել, որպեսզի մազերը թափվեն:
Աշել 1. նայել, 2. համարել:
Աշրդ ա. ժողովրդական երգիչ, աշուղ:
Աշդություն անել:
Աշխանա պ. խոհանոց:
-Աշխարհ եկել ծնվել:
-Աշխարքը աշխարքով դիպչել ազգերի խռովություն՝ ամբարշտություն, պատերազմ լինել:
Աշխարքը պոկ գալ 1. աշխարհի ավերում, 2. ազգաբնակչության ընդհանուր գաղթ:
-Աշխարքն առնել տարածվել: **Սուգ ու շիվանը աշխարքն առել էր:**
Աշկարա պ. ակնհայտ, բացարձակ ձևով:
***Աշի տ.** խոհարար:
Աշպագ պ. խոհարար:
Աչ տես՝ աջ:
Աչառ արջառ:
-Աչքալիս տալ ավետիք տալ, ուրախ լուր հաղորդել:
Աչքածակ ազահ, անկշտում:
-Աչք ածել 1. այս ու այն կողմը նայել, 2. նայել:
Աչքակապուկ մանկական խաղ, որի ժամանակ մի երեխայի աչքերը կապում են, իսկ մյուսները բռնցքով խփում են. ում որ բռնեց, համարում է հաղթած:
-Աչք կթել աչքերը մի բանի հառած նայել, ակնապիշ նայել:
-Աչք կպցնել քնել, ննջել:
-Աչքը բարին տեսնի լիության, բարության ու հաջողության մեջ լինես:
-Աչքը դռանը մնալ ակնդետ մի բանի սպասելիս մնալ:

-Աչքերը բռնի փխք. կուրանա: **Ի՞նչ կերել ես, քթովդ գա, աչքերդ բռնի:**
-Աչքերը գնալ հոգնածությունից քունը տանել:
-Աչքերը շաղվել աչքերը խժիբժի անել, պղտորվել:
-Աչքը կշտացնել 1. հագեցնել 2. **փխք.** կաշառք տալ:
-Աչքը կոխել փխք. դժգոհությամբ մի առարկա ուրիշին տալ:
-Աչքը ձևով ընկնել երկար ժամանակ ձյունին նայելուց աչքը ցավել:
-Աչքը ջուր կտրել ակնդետ նայելուց՝ սպասելուց հոգնել:
-Աչքերից արին վեր թափել շատ լաց լինել, հիվանդագին աստիճանի լացել:
-Աչքիդ վերեն ունք կա մեկի հետ այնքան մեղմ՝ ներողաբար վարվել, որ թույլ չտալ ասել, թե աչքիդ վերեն հոնք կա:
-Աչքի լիսը հատնել տեսողությունը թուլանալ:
-Աչքները ծով դառնալ շատ արտասուք թափել:
-Աչքովն ընկնել աչքին երևալ:
-Աչք ու ունքը կիտել խոժոռվել, տխուր երես ցույց տալ:
*** Ապելատ ֆ.** ուսաղիք:
Ապելսին ո. նարինջ:
Ապով մեկին ապավինելով, հույսով:
Ապրշում պ. մետաքս:
Աջ 1. աջ ձեռքը. 2. աջի ձևով շինած եկեղեցական անոթ, որի մեջ ամփոփված է որևէ սրբի նշխարից մի մաս:
Աջաբ ա. արդյոք:
Աջալ ա. օրհաս, մահ:
Աջամ ա. 1. պարսիկ 2. Պարսկաստան:
Քրդաստանի հայերը մաջալ էլ չսովին աջամի հայերին:
աջիգ ա. թույլ, փոքրոգի
-Աջու թն սիրելի անձ, գորավիզ: **Հայերը քո աջու թնն են:**
Առ ա. ամոթ, պատկառանք:
Առ առնելը: **Առից-տրից** առնելուց տալուց:
Առագաստ այգու հնձանի մեջ մանր քարերով ու կրով շինած տեղ, որտեղ կոխկրտելով խաղողը ճմլում են՝ հյութը հանելու համար:
Առափաթա թոնրի կողերին լավաշ հաց կպցնելու գործիք:
Առըխ տ. նիհար:
Առճիճ / արճիճ պ. կապար:
Առոք փառոք մեծ հանդիսով, ջրով:

-Առ քեզ տրաքոց այ գարմանալի բան, այ քեզ խայտառակություն:

-Ասածը չվանի դնել խոսքին կարևորություն չտալ:

-Ասածս սարին, քարին դիպչի.-Ասածս քամին տանի ասածս չասած համարվի, աստված մի արասցե:

Ասլ ա. ծագում, արմատ, հիմք:

Ասլան տ. 1. առյուծ 2. քաջ, կտրիճ: Ասլան Աղասին, որ գլուխը սաստիկ թափ չի տվեց:

Ասլան բալասի տ. 1. առյուծի ձագ, կորյուն 2. քաջ, կտրիճ:

Ասնաֆ ա. արհեստավոր:

Ասորեվար ասորերեն, ասորական լեզվով:

Ասպար ա. 1. զենք, զենք ու զրահ 2. տես՝ Յարաղ ասպար:

Ասպարավորել զինվել:

* Ասսեստր լ. քաղաքացիական աստիճան է նախառնուլուցիոն Ռուսաստանում: Կոլլեժսկի ասսեստր:

-Աստղը բանել գործը հաջողվել:

-Աստղը ծովել անբախտանալ:

-Աստրծով միխթարվես 1. գործ է ածվում մի նյութի սպառվելու, անհետանալու ու չլինելու դեպքում 2. գլուխդ ողջ մնա:

Աստոծ աստված:

Ասանից խնդրել աստծուց խնդրել:

-Աստված հեռու տանի տերը մի արասցե, աստված ոչ անի:

Ասություն խոսք, զրույց:

Ավալ ա. 1. առաջ: Արինակեր Հասան խանը թուրք ավալ ինքը ձեռն առավ: 2. առաջին:

Ավալի ետրի գլուխն ինքը թոցնի:

Ավալի ա. նախնական, հին: Քանաքըոցոց ավալի անունը հո՝ Երևանումը տանձագող են կանչում:

Ավալի աֆթա ա. ամենից առաջ, հին ժամանակներում:

Ավրլիլ սրբել, մաքրել, ավլել:

Ավթաֆա պ. պղնձյա, խողովակավոր ջրաման, որ գործադրվում էր լվացվելու ժամանակ:

Ավտոն պ. թովչանք, կախարդություն:

-Ատամի խարջ իր ուզածին չափ թույլ, անգոր: Ատամի խարջ մարդ:

-Ատամին խփել փխբ. մեկին ծանր ու թեթև անելով ինչ լինելը ճանաչել:

Արաբա տ. սայլ:

Արագահաս ս. Սարգիս շուտ օգնության հասնող:

Արախլու պարսիկ:

Արաղ տ. օղի:

Արամիշ անել տես՝ Քեֆն արամիշ անել:

Արան դաշտավայր տեղ, հարթավայր:

-Արարած աշխարհ համայն աշխարհ:

-Արարչի տված ամանաթ հոգի:

Արարմունք վարմունք, կատարած բան: Էն զարհուրելի արարմունքին կանգնեց, լիս արեց: Արեախաշ արևահար, արևից այրված:

-Արևը օրհնել մեկին արեշատություն՝ երկար կյանք ցանկանալ:

-Արևկող անել արևի դեմ կանգնել, տաքանալ:

Արեշատություն երկարակեցություն, երկար կյանք:

-Արևովը խնդալ մեկի կյանքով կամ առողջությամբ ուրախանալ՝ մխիթարվել:

Արևադաղ կյանքի համար: Խմենք քո արևադաղին:

Արզ, արգա ա. 1. խնդիր 2. գանգատ:

Արզ անել խնդրել:

-Արինը աչքերը կոխել 1. աչքերն արյունով լցվել, կարմրել 2. փխբ. խիստ հուզվել, զայրանալ:

-Արինը ջուր դառնալ խիստ վախ ու երկյուղ զգալ:

* Արխալի տես՝ ճարխալի: Սիրուն երեսդ արխալի նման կարմրել ա:

Արխալուղ տ. շապկի վրայից հագնելու թևավոր և կարճ փեշերով հագուստ:

Արմադան պ. 1. հազվագյուտ, հիանալի 2. շնորհալի, տեսքով:

* Արմյան ո. հայ (Чармянин բառի աղավաղված ձևը)

-Արշա ընկնել հայտնվել, երևան գալ:

Արշտոտալ հորանջել:

-Արոճ անել որոճել:

-Արտասընքումը ողողվել շատ լաց լինել:

Ափալ թափալ տ. շուտափույթ, հապճեպով:

Ափաշկարա աղբ. ակնհայտ, բացահայտ:

Ափնիք եզրեր, այգու չորս կողմի խաղողի վազերից ազատ տարածությունը:

Ափու հայրիկ:

Ափուտ չփուտ տ. խառնափնթոր, անմիտ, բանդագուշական: Էսպես ափուտ չփուտ խոսքերով կհավատաս:

Աքաշ կավե լայնափոր մեծ աման, որ գործ է ածվում բռնվածքի համար:

-Աքլորին բարձել ունեցած չունեցածը վատնել:

Աֆարիմ պ. 1. կեցցե, երեսդ պարզ 2. կտրիճ:

Աֆարիմ տղամարդ:

Աֆիցեր ֆ. սպա:

Բ

Բարբա տ. հայր, հայրիկ: **Վայ բարբա:**
Բարբադան տես ՝ Աթադան բարբադան:
Բարբաթ պ. արժանի, բավարար, կարգին, ինչպես հարկն է: **Լավ բարբաթ վեր հատել:**
Բարբի պապիկ, հայրիկ (այսպես կոչում են օտարական ծերունիներին):
Բադագ խաղողի և այլ մրգերի եփած հյութը, շփոթ, դոշաբ:
Բադան ա. 1. գրահ 2. մարմին, իրան, մեջք 3. տես ՝ Չաք:
Բադան տ. պատվար, պարիսպ: **Ամեն մեկ բադանը ոսկոռով, ջամդաքով լիքը:**
Բազազիսանա ա. բազազնոց, շուկայի այն մասը, որտեղ խմբված են կտորավաճառները:
Բազար պ. շուկա, առևտրատեղի:
Բազի ա. 1. որոշ կարգի, մի քանի 2. ուն: **Ճամբի կեսին բազի քաղաքացու երեխա... 3.** շատ: **Բազի անգամ գլխները էլ հետը տրմբացնում են:**
-Բազի բազի ա. երբեմն երբեմն:
-Բազի վախտ ա. երբեմն:
-Բազի քյարա ա. մեկ-մեկ անգամ, երբեմն:
Բազկաթան թանով ու բազուկի կոթերով բռնվածք, որից ճաշ են պատրաստում:
Բազկաթթու ճակնդեղից բռնած թթու:
-Բազուխաստ անել դատապարտել, դատավճիռ տալ:
-Բաթմիշ ըլիլ տ. 1. անհետանալ 2. սուզվել, ընկղմվել 3. կորչել:
Բաժակ 1. պատարագի ժամանակ եկեղեցում օրհնված գինին: **Ասածու սուրբ բաժակն էսպես մուտտառում:** 2. Գինի: **Ի՞նչ խոսք ունիմ, բաժակի, մսի համ չեն տեսնում:**
Բաժինք օժիտ:
*** Բալ** լ. պարահանդես:
Բալա տ. որդի, զավակ:
Բալա ա. պատիժ, փորձանք:
Բալաբան տ. 1. թմբուկ 2. մեծ, հսկա, վիթխարի: **Գյումրու դգիցը ռուսի բալաբան, քաջ ու սալդաթների դաստեն... արծվի պես հասան:**
Բալաբանչի տ. թմբուկ զարկող, թմբկահար:
Բալանի, բալանիք բանալի:
Բալասամ ա. անուշահոտ ծաղիկ:
Բալբալա ա. փորձանք, դարդ ու ցավ: **Էն մեռլի կաշուն ո՞վ թամահ կանի, որ նա իր գլուխը տվեց բալբալի:**
-Բալ տալ ընկողմանել, թեք ընկնել:

Բալուլ կապ, փաթաթ: **Քսանից ավելի ձիավոր ժամի դռանը վեր եկան, բալուլ տվին մի երկուսի ձեռքը՝ որ ման ածեն:** Տես Բարուր:
Բալքի պ. 1. գուցե, թերևս 2. իցե թե:
Բախլություն չկամություն, նախանձ:
Բախկալ ա. նպարավաճառ:
-Բահադու էշ ըստ Աստվածաշնչի Բահադու էշը, որ հրեշտակ տեսնելով խոսեց իր տիրոջ հետ:
-Բահամ գալ առաջանալ, ծագել:
Բադ պ. այգի:
Բադաթ պ. խաղողի այգի: **Բադ ու բադաթ չունենք:**
Բադաստան պ. այգեստան, այգիներ: **Սար ու ձոր խնդացին, բադ, բադաստան ցնձացին:**
Բադմանչի պ. այգեպան:
Բադչա պ. պարտեզ:
Բամբաչա բաց ձեռքի հարված:
Բամբաչել ձեռքի բաց թաթով վերնից գլխին հարվածել:
Բայաթի պ. մեղեդի, ողբաձայն եղանակ:
Բայդուշ տ. 1. բու 2. փխբ. գուժաբեր, չարագուշակ: **Ամենն փչացան, բայդուշս մնացի:**
Բայրադ տ. դրոշակ:
Բայրամ տ. տոն, հանդիսավոր օր (մահմեդականների մոտ): **Մհառլամ բայրամ:**
Բանդա պ. ստեղծված, ստրուկ, ծառա:
Աստված իր ստեղծած բանդի ողոր ի՞նչպես կկտրի:
-Բանդ անել պահել, սպասեցնել: **Խալխի թասները վեր դնել տալիս, կամ ձեռներին բանդ անում:**
-Բանը շլոր գործը փուչ, դատարկ:
Բանհոզի հանկարծամահ, վայրկենական մահ:
-Բանհոզի անել վայրկենապես մեռցնել, սպանել:
-Բանհոզի ըլնել վայրկենապես մեռնել:
Բանան / բաննան որմնադիր:
Բանտի ֆարման / բանդի ֆարման պ. հրաման ծառայության:
Բաշ պ. գագաթ, կատար, ծայր, կտրան եզրը:
Բաշարել կարողանալ, կարենալ:
Բաշիրոշ անգործ, պարապ-պարապ, մտամոլոր:
Բաշնրվեր ըկնել պատից ցած գլխիվայր ընկնել:
Բաշպորթ անձնագիր:
Բաշ ուստա տ. գլխիս վրա:
Բաշի տ. քույր, քույրիկ:

Բաա հապա, ուրեմն:
Բաա պ. 1. գրագ 2. մրցում:
Բաս բռնել / բաս մտնել գրագ բռնել. մրցել:
Բասլամիշ անել 1. սնուցել 2. փխբ. ծախել, վաճառել:
Բասմա տ. կոռնակ, գյուղական վայրերում, բնակելի տարածություններից հեռու լցրած և լավ տրորված կենդանիների աղբը, որ հետագայում կտրկելով գործ են ածում որպես վառելիք:
Բասով 1. մրցակցությամբ 2. գրուցելով:
Բար պ. պտուղ :
Բարաբար պ. հավասար:
Բարակել նվագել: **Միրտը նվագել:**
Բարաքյաթ 1. լիություն, առատություն, բարեկիք 2. օրհնություն:
Բարաքյալլա տ. կեցցես, ապրես:
Բարզ տ. տուն, տուն ու տեղ: **Բարզ բուրզ** տուն ու տեղ:
Բարզըմարզ ունեցած-չունեցած:
Բարդան տ. մեծ պարկ , մեծ ջվալ:
Բարեհամ համով, ախորժալի համ ունեցող:
Բարըշացնել հաշտեցնել:
Բարիշ տ. հաշտ, խաղաղ:
Բարխանա պ. բեռ, մթերաբեռ, ունեցած-չունեցած: **Բարզ ու բարխանա:**
Բարութ տ. վառող:
Բարունակ խաղողի որթի երկայն մատը, որ բերք է տալիս և հաջորդ տարին հատում են:
Բարուր խանձարուր:
Բարուրել խանձարուրել, բարուրի մեջ փաթաթել:
Բարմագ պ. դռնաբ:
***Բաքսմաս** պաքսիմատ:
-Բեաբուռ անել պ. անպատվել, խայտառակել:
Տես՝ Բիաբուռ:
Բեզ տ. տոհմիկ, իշխան:
Բեզյար պ. ձրի աշխատանք, որ գյուղացիները կատարում էին պետության ու կալվածատերերի համար:
Բեզություն աղայություն, իշխանություն:
Բեդաղ պ. անարդարություն, ուխտադրություն: **Դադ, բեդաղ** բողոքի աղաղակ:
Բեդամաղ տ. դժգոհ, սրտամնա:
Բեդնամ խայտառակ, վատահամբավ:
Բեդնամ անել խայտառակել, անպատիվ դարձնել:
Բեդովլաթ ա. անառակ, փուչ: **Խեղճն ուներ** հենց մեկ բեդովլաթ այգի:
Բեդուդուր տ. չարագուշակ, վատաբախտ:

Բեզարել տ. 1. հոգնել 2. ձանձրանալ: **Որ ձանփին չհուսահատվի չբեզարի ու էն իր բարի ոտքը մեր աշխարհը չկտրի:**
Բեթար պ. ավելի վատ, վատթարագույն:
Բեին / բեյին տ. 1. ուղեղ 2. գլուխ, խելք: **Բեյինը տաքացած ժամանակը ինչ կուզես ասա:**
Բեխաբար պ. անտեղյակ:
Բեկզադա պ. ազնվագարմ, բեզի որդի:
Բեհայա ա. անամոթ:
Բեհեսար ա անարդար հաշվարկ, հաշվանենգ:
Բեդաֆիլ ա. հանկարծ, անակնկալ:
Բեմուրվաթ ա. անխիղճ, փոքրոգի:
***Բեսթի** լ.-ո. գազան, անասուն, անբան:
Բեվախտ ա. անժամանակ:
-Բերան բերել կատարված բանն ասել, հիշեցնել:
-Բերանը քեզ արա լռիր:
-Բերանը ցիսել պատկառանք ազդող խոսքերով պապանձեցնել, լռեցնել:
-Բերանը ցրվել ափեղցփեղ խոսել, հայհոյել:
Բերզեն հույն: **Բերզենի հող:**
-Բերնի ջուրը զնալ զարմանալ, հիանալ, ապշել:
Բեքար պ. տկար, անտրամադիր:
***Բզա** վ. ուռենի, դափնական ուռի:
Բզբզել դրդել, հրել, հրահրել:
Բզել խթել:
Բզզալ 1. գեռունների, քամու հանած ձայնը 2. փխբ. մեղմ ձայնով երգել: **Ինքն իրան բզզում գնում էր:**
Բիաբուռ պ. անամոթ:
Բիաբոշություն անպատվություն, խայտառակություն:
Բիզ տ. հերյուն, խթան:
Բիզ բիզ ցցված, ուղիղ տնկած:
Բիլիզիզ տ. ապարանջան:
Բիլուն միլիոն: **Հազար ու բիլուն:**
Բիճ տ.-վ. փոքրահասակ սպասավոր, ծառա: **Կուխնեն անկրակ, բիճը անճրագ, բլվեց սատկեց:**
Բինա ա. հիմք, հանգրվան:
-Բինա ընկնել հիմնավորել:
Բիրադի 1. բոլորը, միատեղ 2. հանկարծ, մեկեն: **Ուշքս վրաս չէր, Եղիսաբեթ բիրադի էնպես դիպավ ինձ:**
Բիրզ պիրկ, պինդ:
Բիրդ սոպե, կոշտ ու կոպիտ:
Բիրդան տ. հանկարծ, մեկենիմեկ, միանգամից:
Բիրդանբիր տ. հանկարծակի, մեկ էլ հանկարծ:

***Բիրժ գ.** բորսա:
***Բիր-իրի տ.** մեկ-երկու:
Բլիթ փոքրիկ նկանակ հաց:
Բլվել քանդվել, փլվել:
Բխով կապանք, երկաթե շղթա կողպեքով:
Բխովել կաշկանդել, կապել:
-Բհամ բերել գոյացնել, առաջացնել, արտադրել: **Դառը քրտինքով բհամ բերել:**
-Բհամ գալ գոյանալ, ստեղծել, աճել:
Բհիր 1. փայտե կամ երկաթե ցից, որ խփում են գետնին անասուններ կապելու համար 2. **փխբ.** մեծ: **Ջուռնա քթերով, բհիր ձեռներով:**
Բղղալ 1. ոչխարի, գառան մայոցը, մայել 2. **փխբ.** գոռալ: **Մերու առջի պես բղղալով, նղղալով:**
Բղուղ պ. բռնվածքի համար գործածվող փոքրիկ աքաշ:
Բմբուլ փետուր:
Բյուլբյուլ / բյուլբուլ պ. սոխակ:
Բնճակ ուղեղ, խելապատակ: **Մեր դատավորաց խելքի բնճակն:**
Բոգ տ. գորշ, սպիտակավուն: **Բոգ ձին թամքել, հազիր էր արել:**
Բոզբաշ տ. մտով (հատկապես ոչխարի) և զանազան այնքով պատրաստած ջրալի կերակուր:
Բոթբոթել / բոթել հրել, հրհրել:
Բոթկա տես` Բուդիկկա:
Բոխ դառնորակ համ ունեցող, ծայրը փնջաձև, տափակ գոխ ունեցող բույս է:
Բոխչա պ. կապոց:
Բոդագ տ. կոկորդ, բուկ:
-Բողմիշ անել կոկորդին չոքել, խեղդել: **Էնտեղ շատին բողմիշ արել` ուզում էին ոտ ու ձեռը կապեն:**
Բոյ տ. հասակ:
Բոնձ կոտրած խեցեղեն ամանի ցածի մասը, որի մեջ շան լափ, ջուր կամ հավերի կուտ են լցնում: **Տակը ծակ բոնձին, կրեճ ու խեցատ:**
Բոշ տ. 1. դատարկ, ազատ 2. **փխբ.** ունայն, փուչ:
Բոշա 1. գնչու 2. **փխբ.** աներես:
Բոշանալ թուլանալ:
Բոշ բոշ տ. թույլ-թույլ:
Բոչկա ո. տակառ:
Բոթբոալ բարձր ձայնով աղաղակել:
Բոստան պ. սեխանոց, բանջարանոց:
-Բոստան կտրել սեխ, ձմերուկ գողանալ բանջարանոցից:
Բորան տ. ձյունախառն փոթորիկ: **Բորանն էլ իզները կորցրել ա:**

Բորանի 1. Բորենու մորթուց պատրաստած 2. **փխբ.** մեծ, հսկա:
Ամենից գլուխը նրանց բորանի քուրքն էր:
Բորյագ հն. 1. հյուսիսային ցուրտ քամի 2. ուժեղ, ահեղ քամի: **Ալագյազի գլխիցը մի դառնաշունչ բորյագ վեր կացավ:**
Բոանց հազիվ, հազիվ-հազ: **Ձին քշելիս` սուր գտակների ծերերը բոանց էին երևում:**
Բոնի կոպիտ, անտաշ, անհասկացող, վայրենի:
Բոնոթի տ. քթախոտ:
Բոնցկել հարվածել, բռնցքով խփել:
Բոյար խում պ. շատ լավ:
Բրաբիոն հն. հաղթության պսակ, մրցանակ:
-Բրախ տալ բաց թողնել, արձակել:
*** Բրամի** բրահմայական կրոնի հոգևորական, բրահման:
Բրբոալ բարձր ձայնով խոսել:
Բրիշակ պ. ավերակ, հիմնահատակ եղած, քանդված:
*** Բրիչկա ո.** սայլ, սայլակ:
Բրշկել ավերվել, քանդվել: **Հախվերմազի տունը քանդվեց, բրշկեց:**
Բուգ կոկորդ:
Բուդիկկա ֆ.-ո. շիշ:
-Բուդուրմիշ ըլել գայթել, սայթաքել:
Բուլվար ֆ. քաղաքային այգի, ծառագարդ զբոսատեղի:
Բուլ տ. գոլորշի, շոգի:
Բուլլամա տ. բուրի մեջ եփած (միս):
Բույրուզ տ. հրաման: **Յարաք խեղճիս բույրուզ կրլի:**
Բունիաթ / Բունյաթ պ. հիմք:
Բուս բուսականություն: **Հագար ծաղիկներով, բուսով զարդարած:**
-Բուսու մտնել դարանամուտ լինել:
Բուսուն տ. լրտեսություն` գաղտնի հսկողության հետք:
-Բուսուն պահել դարան մտնել, հետամուտ լինել:
Բուրգ տես` Բարգ:
Բուրդի / բուրթի վ. խաղազնդակ, թոփ:
Բուրջ ա. բուրգ, բերդի պարսպի մեջ շինված աշտարակ:
-Բուրջ ու բաղան ա. 1. պարիսպ 2. **փխբ.** թն ու թիկունք, ամուր պաշտպան:

Գ

Գաբ կարթանման երկձողի փոքր փայտ, որի ծայրից կապում են թուղը և ամրացնում բեռը: **Այբբենը մեր միջուրը գաբով էին բռնում,**

գյուլով վեր վեր քցում:
Գաբ 1. ոլոք 2. սրունք: **Բաց բաց գափերի հետ՝**
հանաք անելով:

-Գաբրիելյան փող այն փողը, որը, ըստ քրիստոնեական հավատալիքի, վերջին դատաստանի օրը պետք է հնչեցնե Գաբրիել հրեշտակը:

Գագ ալ. կանգուն, երկարության չափ= 112 սմ.:

Գագաչափ մի գազի երկարությամբ, մի գազի չափ:

Գալացուկ գալիք, ինչ որ պիտի լինի:

*** Գաղտ մշ. բրբ.** գանգ, գլուխ, գազաթ:

*** Գանջինա տես՝ Տոլաբ:**

Գառն փխբ. հեզաբարո, խելոք, անմեղ: **Գառն**
Աղասին:

Գավ ալ. գինու փոքր դորակ:

Գավազան ալ. հոգևորականի ցուպ, մական:

Գափ տես՝ Գաբ:

Գեղարցյալմագ տ. գնացող, ետ չեկող, անդառնալի ճանապարհ, կորստյան տեղ:

Գեհյան հնոց, քուրա:

-Գեղը կոխել գյուղի վրա հարձակվել:

Գեղըցի գյուղացի: **Գեղըցունց-** գյուղացիների:

Գեջ թաց, խոնավ:

Գեջանգեջ տ. վերջապես, վերջիվերջո:

-Գետինը պոկել ցավի ազդեցությունից խիստ տանջվել:

Գզիր ալ. տանուտերի ստորադրյալ գյուղական պաշտոնյա:

-Գիժ մոզի սանձարձակ, չարաճճի:

Գիմնագլոն հն. նախասովետական շրջանում միջնակարգ դպրոցի մի տեսակ:

Գինեգիժ հարբած, խմած:

Գիր գրվածք, նամակ:

-Գիր բաց անել գուշակություն անել:

Գլանալ բթանալ: **Տես՝ Գուլանալ:**

Գլխաքար գերեզմանի գլխավերև դրված քարը:

-Գլխին կրակ վառել սաստիկ կսկիծ գգալ, վշտանալ:

-Գլխին քար աղալ տանջել, նեղել, չարչարել:

-Գլխիցը դուրս տալ զառանցել, անմիտ, անիմաստ խոսել:

-Գլխից հանել մոլորեցնել, խելքից հանել:

-Գլխովը ման գալ փայփայել, սիրել:

-Գլխովը պտիտ գալ սիրել, խնամք՝ հոգ տանել, սպասավորել:

-Գլուխը ետ դնել ի սեր մի բանի անձը գոհել:

-Գլուխը լալ անբախտության մասին սգալ, հոգս անել:

-Գլուխը կրել գլուխը թաղել, գլուխը հողել (անեծք):

-Գլուխը դորդել արդարանալ:

-Գլուխը տալ գլխատել:

-Գլուխը փեշը դնել ի սեր մի բանի մահն աչքի տակ առնել:

-Գլուխը քորել գլուխը քորելով հեզնել, չհավատալ:

-Գլուխ թափել անձն ազատել:

-Գլուխն ուտել մեռցնել, սպանել, ասպարեզից հանել:

-Գլուխը վեր բերել 1. խոնարհվել, հպատակվել, հնազանդվել 2. գլուխը կտրել:

Գյաղա ալ. 1. ծառա 2.արձմ, նվաստ:

Գյալուր տ. եկամուտ, հասույթ:

Գյամի տ. նավ:

Գյաֆ կատակ:

Գյոզրեն դարտակ անխելք, հիմար, **տես՝ Գորգա:**

Գյոզ տ. աչք: Գյոզմ - աչքիս լույս, սիրելիս:

*** Գյոզ բալասի տ.** աչքի լույս որդի, շատ սիրելի:

Գյոզուկ տ. ակնոց:

Գյոլ տ. լիճ:

Գյոռ տ. գերեզման, մահմեդականների գերեզման:

Գյոռբեգյոռ տ. (հայեղյանք) դժոխական, անհանգիստ հոգի, սատանայի բաժին:

Գյոռբեգյոռ ըլել:

Գյովդա տ. իրան, մարմին:

Գյորա տ. համեմատ, համապատասխան:

Գյորխանա տ. գերեզմանատուն:

Գյուլ ալ. վարդ:

Գյուլար ալ. վարդաջուր:

Գյուլաբաթին ալ. ոսկեթել, ոսկեհուռ:

Գյուլաբղան ալ. վարդաջրի սրվակ:

Գյուլաբղան ասես, թե քյուքյուրդան արաղի թասերն են:

Գյուլբանդ/գյուլբանք վարդագույն ապրշումի մեծ բարակ գլխի թաշկինակ: **Գյուլբանդի**

աղլուխ:

Գյուլխաբահի ալ. այգածաղիկ:

Գյուլլա տ. հրացանի գնդակ:

Գյուլլախորով գնդակահար: **Գյուլլախորով անել** գնդակահարել:

*** Գյուլլաչի տ.** գնդակ արձակող, հրացանից կրակող:

Գյուլջիան պ. աշխարհի վարդ, վարդաշխարհ:
Գյուման բացի: **Տերտերից**, յա տիրացվից
 գյուման շարական ասող՝ գեղ տեղն ո՞վ կա:
 -**Գյում** ըլել անհետանալ, չքանալ:
Գյուն տ. ժողովուրդ, ազգուտակ: **Տես**՝ էլ՛:
Գյունան պ. մեղք:
Գյունանքյար պ. մեղավոր, հանցագործ:
Գյունի երկրորդական կին, հարձ: **Հագար**
 դարավաշ ու գյունի առաջին ծուկն էին ըլում:
Գյուջով դժվարությամբ, ուժով: **Ստեփանը**
 գոռով, գյուջով աչքը բաց արեց ու մի քիչ
 զգաստացավ:
Գյուռ տ. 1. հորդ, առատ 2. խիտ, հոծ:
Գոգրա վ. արհմ. դղում, դատարկագլուխ:
Գոթորմացել խեղանդամվել:
Գոթորմել գոթի դառնալ, ծուլանալ:
Գոլ տաքություն, տաք: **Գոլ գոլ** տաք տաք:
Գողադարան գողերի պահվելու՝
 ապաստանելու տեղը:
Գոմփել բռունցքով խփել:
Գոմփոռ գամփոռ:
Գոջի խոճկոր, խոզի ձագ:
Գոռո, գրոռ ո. դրամական փոքր միավոր, կես
 կոպեկ:
Գոփել կորզել, հափշտակել:
Գվզվալ կաքավի, աղավնու ձայն հանել:
 -**Գտակը ծուռ դնել փխբ.** ոչ ոքից չվախենալ:
Գտակս ծուռը կդնեմ, քեֆս արամիշ կանեմ:
Գրակալ եկեղեցիներում ծալովի սեղան, որի
 վրա դնում են ընթերցելիք գիրքը:
 * **Գրաֆ** գ. կոմս:
 * **Գրաֆինկա** ո.-գ. կոմսուհի:
Գոգոսալ գրո-գրո ձայն հանել, որոտալ:
Գրոռ հոգեառ, չար ոգի:
Գրվանքա 1. 409 գրամ ծանրություն ունեցող
 կշռաքար 2. կշռաքար:
Գուբ ասր. 1. փոս, հոր, գերեզման:
 Արտասուքն աչքումս՝ ես էլ եմ հասել էն խոր
 գրի դուռն, որ դուրս չեմ գա էլ 2. ավազան
Գուլ պ. բուր, ոչ սուր:
Գուլանալ պ. բթանալ:
Գուլացել բթացել:
Գուն գույն, հանգ, եղանակ: **Նրա պատկերի**
 գունը գողանա:
Գունդ ու կծիկ կծիկի պես հավաքված, կուչ
 եկած:

Դ

Դաբաղ ա. կաշեգործ:
Դաբանչա ա. հին ձևի ատրճանակ:
Դադան մնկ. հեծնելու անասուն՝ ձի, էշ:
Դադում/դատում աշխատանքի արդյունք,
 վաստակ:
Դադ բեղատ/ դաթ մադաթ/ դատրեդատ
 վշտի, նեղության բացականչությունն է, բողբոջ
 անարդարության դեմ:
Դալալ ա. մունետիկ, միջնորդ:
Դալդա ա. ալիք:
Դավլաթ ա. առատություն, հարստություն:
Դան ձի վարելու հորդորանքի ձայն:
 * **Դաղ** տ. սար: **Դաջտան, դաղդան:**
Դաղել խիստ եռացնել (յուղը): **Կտրատած**
 ձեռները դադած եղի պղնձի մեջը կոխել:
Դաղըթմիշ անել/դաղթմիշ անել ցրել,
 քարուքանդ անել:
Դամ պ. շունչ:
Դամա ֆ. աղջիկ, տիկին, կանացի սեռը, **Մեր**
դամերն ու մեր կավալերները:
Դամաղ պ.-տ. քիմք:
 -**Դամաղը չաղ** գոհ, քեֆը տեղը:
 -**Դամաղը տաքանալ** քեֆովանալ:
Դամար տ. երակ, զարկերակ:
 -**Դալմա ընկնել** կաթվածահար լինել, կաթված
 ստանալ:
Դամդա ա. դրոշմ, նշան: **Մոդուս դամդեն**
 իրան խոռվ:
 -**Դամ քաշել** ձայնակցել, նվագակցել:
Դայրա ա. դափ, թմբուկ: **Բայց սագի ու**
դայրայի ձենը մեկ դիի:
Դան պ. աղուն, հացահատիկ: **Դան ունես, քո**
ջաղացը տար:
Դանգ ծանրության փոքր չափ=0.09 գրամի:
 * **Դաջ** տ. քար: **Դաջդան, դաղդան:**
Դաջել խարանել, դրոշմել:
Դառաբա տես՝ Դավի դառաբա:
Դառնավարամ տխրալից, թախծալից:
 էսպես տխուր, դառնավարամ մնացել էր,
 բաղումը նստած:
 -**Դառ ու դարդակ** ձեռնունայն, ամեն ինչից
 գուրկ:
Դաս բաժանմունք, տեղ (եկեղեցում): **Կնանիքը**
 ետի դասումը... սկսեցին գրից անել:
Դասակվել շարքը դասվել, դասակից դառալ:
Դասել կարգավորել: **Որը շորերը դասում, որը**
տեղը քցում:
Դասթա / Դաստա պ. 1. խումբ 2. սրի ձեր,
 երախակալ:

Դաստանայ պ. 1. ամանեղեն սրբելու լաթ 2. ուսաշոր, ջուրը կրելիս կուժը վրան դնելու համար:

Դաստուր պ. արձակուրդ, թույլտվություն:

Դավ ա. վիշտ, ցավ: **Էջն իր ոտքերի ցավն ու դավն ա քաշում:**

Դավա ա. դատ, վեճ, կռիվ: **Մենք մեր դավին չոլումը քուֆան կանենք:**

Դավթար պ. մատյան, հաշվեգիրք, ցուցակ:

Դավթար ենք արել նրա փորի աղիքն:

Դավի տես՝ Դավա:

-Դավի դատարա ա. վեճ, կռիվ ու աղմուկ:

Դավրիշ պ. մահմեդական թափառական կրոնավոր:

-Դարդալամիշ ըլել / Դառղլամիշ ըլել դարդը ուրիշին պատմել:

Դարդակ դատարկ:

Դարդավարամ 1. ցավ ու չոռ: **Շլինքը ծուռ , ձեզ դարդավարամ:** 2. վշտախեղդ, կսկծախեղդ: **Մի իրիկուն էլ խիստ դարդավարամ:**

Դարդիմանդ պ. սրտաբաց, արիասիրտ, զվարթ, մեծահոգի:

Դարըդուս, դարիդուս, դարիվեր, դարվեր զառիվեր: **Ջուրը դարիդուս չի գնալ:**

Դարման պ. 1. հարդ 2. դեղ 3. հիվանդի վրա խնամք:

Դարայի մետաքսե գործած կտոր:

Դարյա տես՝ Դայրա:

Դափ պ. դահիրա. թմբուկ դիռլ:

Դափաչի պ. թմբկահար, դիռլչի, թմբուկ զարկող:

-Դբի դեմ գալ զառիվերի հանդիպել: **Տես՝ Դիր:**

-Դեղը տալ զառանցել, անկապ՝ անիմաստ խոսել:

Դեն տես՝ դիհ:

դեղապետ հիվանդի կամ նեղ օրվա համար (իբրև դեղ) պահված բան՝ մրգեղեն, քաղցրեղեն և այլն, նույն ժամանակին չճարվող, , հազվագյուտ բան:

Դեղնածաղիկ ներկի համար գործածվող դեղնագույն ծաղիկ է:

Դեղնաշոր դեղին սալոր, սալորի տեսակ:

Դելի տ. իբրև, որպես: **Ղարիք դելի վարվել:**

Դերձան բամբակից մանած բարակ թել:

Դերցիզ դերձակ:

Դգել ուղղել, հարթել, կարգի բերել:

Դզվել ուղղվել, հարթվել:

Դըբա դեպի: **Տես՝ Դիբա²:**

Դմբարակ դափ, թմբուկի տեսակ: **Տես՝ դմբակ:**

***Դիվանա պ.** խելագար: **Տված յարեքդ ամեն մեկն արել է ինձ սալթ դիվանա:**

Դիբ զարիվեռ:

Դիբա դիպակ: **Ջառ մինթանա (լեհին), դիբա արխալուդ, սամուր քուրք:**

Դիբա դեպի: **Դիբա էն սարերը:**

Դիլակ ա. մտածմունք, խորհում, մուրագ: **Ուխտդ կատարել, գնացել, դիլակդ առել էս:**

Դիլբանդ տ. թարգմանիչ:

Դիհ պ. կողմ: **Մեկ դիի վրա թեքված:**

Դին պ. հավատ:

Դինգ պ. որիզը (չալթուկը) պատենահան անելու աղաց: **Դնգի ոտը ցածրացնել** խոսքը կարճ կտրել:

Դինիա ա. աշխարհ: **Էս դինումը ջոկ են տանջվում, էն դինումը հո՝ էլ ի՞նչ ասել կուզի:**

Դինջ տ. հանգիստ, խաղաղ:

Դինջանալ 1. հանգստանալ 2. փխբ. մեռնել: **Մերն ու ծնողական գուրթը ջիգյարումս, էս դինջանայի, էթըմին ո՞վ պահեր:**

Դինջացել հանգստացել:

Դինջություն հանգստություն, անդորրություն:

Դիվան պ. դևեր: **Հազար գլխանի դիվան** ստամներ դրձտացնում:

Դիվան պ. դատաստան:

***Դիվանա** ցնորված, խելագարված, խելացնոր:

Դիվանխանա պ. 1. դատարան 2. սրահ , ընդունարան:

-Դիր գալ հաճելի լինել, հավանելի դառնալ, դուր գալ:

Դիրագ տ. նեցուկ, սյուն: **Նավի դիրագի վրա ցամաքի դշեր տեսան նստած:**

Դիրակ տես՝ Դիլակ:

Դիփունիսեն բոլորից, ամենքից:

Դիք տ. խիստ զառիվեր, սաստիկ ցցված:

Դիա էլ ավելի, առավել ևս:

Դիռլ տ. դափ, թմբուկ:

Դդդդալ գեր անասունների շարժվելու ժամանակ մսի երերալը:

Դմբակ թմբուկի մի տեսակ, դահիրա, դափ: **Սազանդար ասես, դմբակ ու դայրա:**

Դմբդմբալ թնդալ, որոտալ:

Դմբուզ բռունցք, կռուփ:

Դմփել խփել: **Մենք գոփում ենք, սատանին դմփում:**

Դնքսել ծեծել, խփել:

Դովաթ տես՝ Դովլաթ:

Դոխ քառակուսի, ձագարածն փայտե արկղ, որ հարմարեցնում են աղացաքարի վրան և մեջը լցնում աղալիք ցորենը:

-Դոնսիշ ըլել ապստամբել, երես շուռ տալ:

Դոշ տ. կուրծք:

Դոշակ ա. ներքնակ:

Դոսթ, **Դոստ** պ. բարեկամ: **Դոսթ ու դուշման**:
Դովթալար պատրաստական, ճարպիկ, արագահաս:
Դովլաթ ա. հարստություն:
Դովլաթավոր հարուստ, ունևոր, հարստություն ունեցող:
Դովրան ա. Իրավունք, իշխանություն: **Քոռ ըլի** էնպես վատթար դովրանը, շներն էլ են մեզ վրա աղություն անում:
Դորակ պ. փոքր կուժ:
Դոհ առույզ, ժիր, աշխույժ: **Դամաղը չա՞ղ ա**, լավ դոհ՞ ա, թե ոտից ձեռից ընկել ա:
Դոնափետի ուղեկալ, ճանապարհները փակող ձող:
Դվաչի ա-տ. աղոթարար: **Սրանք քո չրաղն են, քո ըմբրիդ դվաչին**:
Դվիթ տ. գրիչ. հատուկ տեսակի գրիչ, որ պահվում էր պատյանի մեջ, որի ծայրին դրված էր լինում թանաքով խոնավեցրած բամբակ:
Դվորը դեպի ո՞ւր, ո՞ր կողմը:
Դրմբալ 1. թնդալ, դրրդալ 2. փխբ. Լիքը լցված, առատությամբ թնդալ: **Տան ներսն ու պուճախը դրմբում էր**:
Դրմդրմբալ դրրդալ, դրմդրմբոց հանել:
Դրնգալ դրմբալ, դրրդալ:
***Դրոշկա** ո. սայլակ:
Դրստել ուղղել, ճշտել:
Դրուստ պ. ուղիղ, շիտակ, ճիշտ:
Դումբարա պ. կրկին, նորմեկանց:
Դուգ պ. իլիկ: **Դուգ, ջահրա մանիլ**:
Դուզմա տ. հանգույց, կոճակ, զարդակոճակ:
Դուդուկ տ. փխբ. ուրիշի թելադրանքով շարժվող: **Տո , դուդուկ քոփակ, աչքդ քոռանա**:
***Դուել** ֆ. մենամարտ:
Դուգ ա. 1. հարթ, ուղիղ, 2. հարթավայր 3. ճշմարտախոս: **Դուգ մարդ**:
Դութասաղ տ. կալանավոր, բանտարկյալ:
Դուման տ. 1. մշուշ, մառախուղ 2. Տես՝ **Թոգ ու դուման**:
Դունչ քիթ ու պռունկ, քիթ բերան: **Ով նրա դնչին մտիկ կտա**:
Դուշման պ. թշնամի:
***Դուռակ** ո. հիմար, տխմար, ապուշ:
Դուռթմա տ. հարված: **Դուռթմա տալ** հրել, հարվածել, խթել:
Դուս քաշել հանել:
Դուրբին պ. հեռադիտակ, դիտակ:
Դուրում տ. լավաշի մեջ գլանաձև փաթաթած ուտելիք:
Դուրան ա. Խանութ:

Ե

Եգին արագ, շուտ:
Եղն 1. հետո: **Ջորքն կորցնելն էղն** 2. հետո: **Աչքն էր՝ որ եղններիցը մայիք էր մնացել**:
Եղին վերջին, հետին: **Տես՝ Ետի**:
Եդո հետո:
-Եդ քցել բացել, բաց անել: **Սիրտն էլ իր խուփը եդ գցեց**:
Եզդի / Եզդիդ քրդական մի ցեղ:
Եթիմ ա-տ. որբ:
***Եթմիշ իքի** տ. յոթանասուն երկու:
Եղալի փխբ. հարուստ:
Եղեշնակ կաթոս հյութալի գորշագույն խոտ՝ երկայն ցողունով, ցանցառ տերևերով, դեղին ծաղկով, հոշնակ:
Եմ տ. կեր, ուտելիք:
Եմիշ տ. սեխ:
Եննա հետո: **Եննա մենք գիտենք**:
Եո մորմոք, կսկիծ, մարմաջ: **Սրտիս եռը ինձ խոռովում ա**:
Եռալ 1. եփ գալ 2. Երերալ, շարժվել: **Տեղիցը եռալ**:
-Եո գալ եռալ, եփ գալ:
Եսիր ա. գերի:
Ետի հետին, վերջին: **Կնանիքը ետի դասումը...** չոքեցին:
Երաբ ա. արդյոք: **Տես՝ Յարաբ**:
Երաղ տես՝ Յարաղ:
-Երեսը գրից գալ մեկից վատ խոսք լսել:
Երեսըհանց արտաքուստ, ի ցույց: **Դայանեն** երեսըհանց մի քիչ թոնթորաց:
-Երեսը պարզ անել ամոթալի չթողնել:
-Երեսի ջուրը գնալ ամոթ՝ պատկառանք չունենալ:
-Երբմիշ ըլել շարժվել, երերալ, քայլել գնալ:
Երթիկ երդիկ, գյուղական հին տներում կտուրի վրա օդանցք-լուսամուտք:
Երթկակալ երդիկը ծածկելու համար դրված առարկա:
Երիշ տ. 1. Քելք, քայլվածք, ընթացք 2. գրոհ : **Խեղձ դոնշունի վրա երիշ քշեցին**:
Երլու տ. բնիկ, տեղացի:
-Երկինք, գետինք ամբողջ աշխարհը: **Երկինք, գետինք** գլխներին սևացավ:
-Երկնային թագավոր աստված, արարիչ, ստեղծող:
-Երկու հոգի հղի: **Ով երկու հոգիս էր, տղա պտեր բերիլ**:
-Երկու սրի արանքին մնալ երկընտրանքի մեջ լինել, երկու դժվարին կացության մեջ լինել:
Եփնջավոր այծենակաձ կրող:
Եքա աղբ, մեծ, ահագին:

Չ

***Չագղրավիա** **ո.** ողջություն, առողջություն:
Տես՝ **Չղրավի:**
Չայ **ֆ.** դահլիճ:
Չակոն **ո.** օրենք:
-Չահլեն գնայ ձանձրանալ, տաղտկանալ:
-Չահլակուշտ ըլել տես՝ **Չահլաքուշ ըլել:**
-Չահլաքուշ ըլել ձանձրանալ, զզվել:
Չահնաթ **ա.** նեղություն:
Չահր **պ.** թույն, խիստ դառը:
Չահրմար, Չահրմար **պ.** 1. խիստ դառը, լեղի 2.անպետք, անհաճո: **Թութուն էր քաշում, որ բայքի թե էն գահրմար հոտը մի քիչ կտրվի:**
3. Օձի թույն, հարամ: **Դենին գլխին գահրմար ըլի:**
Չաղար **տ.** փոքր շուն, որսի փոքր շուն: **Չղարի շունը ու ֆիլը:**
Չանգալ զանկապան, ճիտք, դոնապան:
Չանգակ **պ.** զանգ: **Հայերն առանց զանգակի ժամ չեն գնալ:**
Չանգու ասպանդակ: **Տես՝** **Օրգանգու:**
Չաքանչ զոքանչ:
Չառ **պ.** 1. ոսկի 2. ոսկեթել, լավ մետաքսի կտոր 3. **Տես՝** **Չառ վտրախ:**
Չառքար / Չառքառ **պ.** զասնավուխտ, կերպասի տեսակ:
-Չառ վարաղ **պ.** ոսկեթերթ, ոսկեգոծ, ոսկեջուր:
***Չաստավ** **ո.** ուղեկալ, ուղեփակ:
Չատ **ա.** բան, առարկա, իր: **Կացինն ինչ զատ ա, որ մեզ քյար անի:**
-Չատը, մատը բանը մանը:
-Չատերը կիտել ունեցած չունեցածը հավաքել:
Չարար **ա.** վնաս:
Չարք **ա.** թափ, ուժի սաստկություն:
Չարքագան թնդանոթ:
Չարբել խայթել, հարվածել:
Չարգար **պ.** ոսկերիչ:
Չարզանդ 1. Չարհուրանք , սուկում 2. զարհուրելի, ահարկու:
Չարզանդել զարհուրել, սարսափել, սուկալի:
Չարթնե բացի, չհաշված: **Ամեն մեկ տան հինգ վեց տղամարդ կար, զարթնե մեծն ու պստիկը:**
*** Չղրավի** **ո.** ողջություն, առողջություն:
Չիբիլ **ա.** աղբ, ավելվածք:
Չինաթ **ա.** զարդ, պաճուճանք:
-Չին զինաթ **ա.** զարդ ու զարդարանք:
Չինքս զարդ, զարդարանք, ոսկեղեն ու արծաթեղեն զարդեր:

Չլել 1. ուժեղացնել, ձայնը բարձրացնել 2. թնդացնել:
Չղարի տես՝ **Չաղար**
Չղլթալ մղկտալ, աղերսել
*** Չմլա մշ.** բրբ. այսպիսի:
Չմոռոթ **ա.** գմբուխտ թանկագին քարը, թանկարժեք քար:
Չնդան **պ.** նեղ, խավար բանտ:
Չնջիլ **պ.** 1. շղթա 2. կապանք: **Որդիական սերն էր, որ բնության դրած զնջիլը էսպես ջարդեց ու փշրեց:**
Չոլ զոլ գծավոր, գործվածքի երկարությամբ ձգված գունավոր գծեր:
Չոխ 1. բանջարեղենի ցողունը 2. սիբեխ կոչված բանջարի ցողունը, որ աղաջուր են դնում ու պահում որպես բոնվածք:
Չոռ **պ.** 1. ուժ : **Չոռի բան հո չի:** 2. դժվարին:
-Չոռ անել գորել, ուժ գործադրել, հաղթել:
Չոռքա **տ.** ուժեղ, զորավոր:
-Չոռով գյուջով **տ.** ուժով ստիպելով:
-Չովի անել թեֆ անել:
Չորել կարողանալ. ձենհաս լինել:
Չորք զորություն, ուժ, կարողություն:
Չոփի ահագին, վիթխարի , աժդահա:
-Չվիրը բերել ձանձրացնել, զահլեն տանել:
Չրզնդալ ահից կամ ցրտից դողալ, սարսափել:
Չրզնդոց սարսուռ, ահից կամ ցրտից առաջացած. խիստ դող:
Չրից զրույց, խոսակցություն:
-Չու անել սլանալ, հարձակվել, ընթացք բռնել:
Չու բռնել / Չու քաշել թափով հարձակվել, հեռվից վազելով հարձակվել:
Չուզս զարդարանք:
Չուլում **ա.** պատուհաս, աղետ, մեծ փորձանք:
Չուռնա **տ.** 1. նվագափող, սրնգի մի տեսակ 2. փխբ. մեծ, անճոռնի: **Ու զուռնա մեխոն էնտեղ ձգվեցավ:**
Չուռնալամա **տ.** շատ երկար ձգձգված:
Չուռնաչի **տ.** 1. զուռնա նվագող, զուռնա փչող, փողահար 2. փխբ. տգետ, անշնորհք:

Է

*** Էզգամին** լ. քննություն:
*** Էզոխստորեն** եսասիրտորեն, եսասեր կերպով:
Էլ **տ.** ցեղ, տոհմ:
Էլա գոնե, թեկուզ:
Էլած եղած: **Էլած շունչս էլ հանեմ նրան տամ:**

Էլլիզ համայնք:
Էլմը դարձյալ, էլ : **Ձեն Կիկոն, էլմը գեն Կիկոն-**
 էլ էն ջուրը էլ էն ջաղացը:
Էլչի պ. 1. դեսպան: **Էլչի, նախարար իշխան,**
մեկին էլա մտաը չի թողնում : 2.
 պատգամախոս:
Էլ ջեր նորից, դարձյալ:
 -**Էլ ու գույն** ազգուտակ, ազգատոհմ: **Ընչանք**
մեռնինք ոչ, որ մեկ օր էլ էսպես էլով գույնով
ռուսի ձեռի տակին նստինք, քեֆ անենք:
Էլֆիա տ. առագաստ՝ նավի:
Էհտիբար ա. վարկ, հարգանք:
***Էմալ մշ. բրբ.** այնպիսի:
***Էմլա մշ. բրբ.** այնպես, որպես:
 -**Էնը գյորա** նրա համեմատ:
 -**Էն հանգին** էն տեսակ:
Էնդիան նրանից:
Էնդուր նրա:
 -**Էշ բզեղ չիմանալ** շատ անշնորհք լինել:
 -**Էշ ուտել, էշ մեծանալ** կոպիտ՝
Էշխ ա. 1. եռանդ, աշխույժ 2. սեր, փափագ,
 տենչ:
Էսոնք/Էստոնք սրանք:
Էստուր սրա:
 -**Էստուց դենը** այսուհետև, սրանից հետո:
Էտաժ ֆ. ռ. հարկ:
Էտել հատել, հատանել, որթի մատերը կտրել:
*** Էտիքեթ ֆ.** 1. վարվելակարգ, սովորություն:
Սրանք ինչ գիտեն գակոն, էտիկեթ: 2. պիտակ:
Էր այր, քարայր, քարանձավ:
Էրնակ երանի: **Էրնակ տալ:**
Էրոցք այրոցք, ջերմ:
Էփվել 1. եփվել 2. փխր. կոփվել, փորձվել:
Էքսի հաջորդ: **Էքսի օրը** - հաջորդ օրը:

Ը

Ըլոդ եղող: **Հարցրեք էնտեղ ըլոդներին:**
Ըխտիալ/Ըխտիար ա. կամք, իրավունք:
Ըմբր տես՝ Ումբր:
Ընդրանց նրանց:
Ընչանք մինչև:
Ընչի ինչու:

Թ

Թարաղա ա. թերթ:
Թարուն ոհմակ, բազմություն:
Թաղարեք ա. պատրաստություն:
Թագա պ. նոր:
Թագացնել նորոգել:

Թագի պ. 1. որսի շուն , բարակ 2. **փխր.** շատ
 նիհար: **Թագի ձիու կոխին կապած:**
Թաթասավան/Թաթասևան օրորոցում՝
 մանկան թները փաթաթելու շորը:
Թաթուկ կենդանիների առաջին ոտների
 թաթը: **Արջն էլ իր թաթուկն դեմ արեց նրան:**
Թալան պ. կողոպուտ, ավարառություն:
Աշխարհս ալան թալան ա:
Թալվար խաղողի այգի:
 -**Թախ կենալ** թաքնվել:
Թախտ պ. գահ:
Թախում տ. սպաս: **Սուփրի թախում:**
Թահր կերպ, կերպարանք, տեսակ:
Թաղ 1. արվարձան, քաղաքամաս: **Երևնի**
թաղերը: 2. խաղողի որթատունկի թաղելը 3.
 կամար:
Թաղաթ/Թաղաղ ա. ուլժ, գորություն: **Ոչ**
աչքումը լիս կար, ոչ ջանումը թաղաթ:
 -**Թաղաղից ընկնել** ուժասպառ լինել:
Թաղավուր/Թաղվուրթ փոփոխություն,
